

**ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ
(ՀՀ-ի և ԳԴՀ-ի օրինակով)**

ԷՂԳԱՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Պետական կառավարման արդյունավետ մոդելի ընտրության հարցը արդիական է ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների, մասնավորապես հետխորհրդային պետությունների համար: Այդ երկրներում շարունակվում են մեծածավալ սահմանադրական փոփոխությունները, որոնք առաջին հերթին առնչվում են հենց պետական կառավարման կատարելագործմանը:

Առավել ժողովրդավարական արժեհամակարգերի գաղափարն ամբողջական դրսևորում է ստանում խորհրդարանական կառավարման մոդելի շրջանակներում: Կառավարման այս ձևը երկիրը տանում է ժողովրդավարացման ճանապարհով, ապահովում է ժողովրդի և քաղաքական տարաբնույթ ուժերի առավել ներկայացվածությունը առանցքային որոշումների կայացման գործընթացում՝ նպաստելով քաղաքական համակարգի կայունացմանը և քաղաքակիրթ ընդդիմության ձևավորմանը: Խորհրդարանական կառավարման համակարգի առավելություններից են համարվում զսպումների և հակակշիռների առավել արդյունավետ մեխանիզմի ձևավորումը, օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի միջև առաջացող քաղաքական ճգնաժամերի հաղթահարման ճկունությունը, որոնք ապահովվում են այնպիսի ընթացակարգերի գործառնամար, ինչպիսիք են արտահերթ խորհրդարանական ընտրությունները, կաբինետի փոփոխությունը և այլն: Կառավարման այս ձևին հատուկ առավելությունները հատկապես 20-րդ դարի 90-ական թվականներին նպաստեցին երիտասարդ ժողովրդավարությամբ երկրներում խորհրդարանական կառավարման մոդելի լայն տարածմանը¹:

Այս համատեքստում չափազանց կարևոր է առաջատար երկրների կառավարման փորձի ուսումնասիրությունը մասնավորապես խորհրդարանի ձևավորման կառուցակարգերի համատեքստում: Հատկանշա-

¹ Տե՛ս **Է. Քալանթարյան**, Կառավարման ձևերի կերպափոխման միտումները հետխորհրդային երկրներում, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2019, № 1 (28), էջ 69:

կան է խորհրդարանական կառավարման հարուստ փորձ ունեցող Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրինակը, որը դասվում է բարձր զարգացած դեմոկրատական քաղաքական ռեժիմ ունեցող երկրների շարքին:

ԳԴՀ Հիմնական օրենքի համաձայն՝ այն դեմոկրատական, իրավական, սոցիալական պետություն է՝ դաշնային կառուցվածքով, որտեղ օրենսդիր իշխանությունը պատկանում է երկպալատ խորհրդարանին, գործադիր իշխանությունը՝ կանցլերին, իսկ պետության գլուխը նախագահն է, որն օժտված է պառլամենտական հանրապետությանը բնորոշ ֆորմալ լիազորություններով, սակայն ողջ իշխանությունը գործնականում պատկանում է կանցլերին²: Հաշվի առնելով դաշնային կանցլերի բավականին ուժեղ դերակատարությունը՝ որոշ գերմանացի հետազոտողներ ԳԴՀ-ն բնորոշում են որպես «կանցլերյան հանրապետություն»:

Հողերի և դաշնության, ինչպես նաև հողերի՝ միմյանց միջև հաստատված հարաբերությունների համակարգը բնութագրվում է որպես կոոպերատիվ ֆեդերալիզմ, քանի որ նրանց փոխհամագործակցությունը օրենսդրորեն ձևակերպված է: Այս քաղաքականության շրջանակներում հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է ուղղահայաց (դաշնության և հողերի միջև) և հորիզոնական (հողերի միջև) համագործակցության վրա³:

Օրենսդիր իշխանությունը ԳԴՀ-ում իրականացնում է երկպալատ խորհրդարանը. ստորին պալատը Բունդեսթագն է, իսկ վերինը՝ Բունդեսրատը: Բունդեսթագն ընտրվում է 4 տարի ժամկետով՝ համընդհանուր, ուղղակի և հավասար ընտրությունների ճանապարհով⁴:

Բունդեսթագը բաղկացած է 656 պատգամավորից: Ընտրությունների ժամանակ կիրառվում է խառը ընտրական համակարգ. պատգամավորների կեսը (328) ընտրվում է ընտրատարածքներից մեծամասնական համակարգով՝ յուրաքանչյուր ընտրատարածքից մեկ պատգամավոր: Մյուս կեսն ընտրվում է կուսակցությունների, այսպես կոչված, հողային ցուցակից՝ համամասնական համակարգով: Բունդեսթագի ընտրություններում յուրաքանչյուր ընտրող ունի երկու ձայն: Առաջինը նա տալիս է ընտրատարածքում պատգամավորի թեկնածուներից մեկին, իսկ մյուսը՝ կուսակցություններից մեկի հողային ցուցակի թեկնածուներին: Ընտրատարածքում ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է առավելագույն ձայներ: Մնացած 328 տեղը լրացնում են

² Տե՛ս Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրություն՝ ընդունված 23. 05. 1949թ. //www.bundestag.de/gg?fbclid=IwAR1vh6C9zvhsZAAjkXy4fCl6XZw9WTARlgAR75vjZu4me5vb76pvmJUB1_0:

³ Տե՛ս **Автономов А. С.** Конституционное (государственное) право зарубежных стран. М., "Проспект", 2005, էջ 439:

⁴ Տե՛ս **Клайн Г., Цее В.** Бундестаг: государственное право Германии. Т. 1. М., "ИГПАН", 1994, էջ 152:

կուսակցությունների հողային ցուցակների թեկնածուները: Բունդեսթագում տեղ են ստանում միայն այն կուսակցությունները, որոնք կա՛մ հավաքել են կուսակցությունների տրված ընդհանուր ձայների 5 %-ը, կա՛մ հաղթող են ճանաչվել ոչ պակաս, քան 3 միամանդատ շրջանում: Այս ամենը փոքր կուսակցությունների վերացման պատճառ դարձավ⁵:

Բունդեսթագում ձևավորվում են նաև կուսակցական խմբակցություններ: Այստեղ կան քանակական սահմանափակումներ. համաձայն Բունդեսթագի ռեգլամենտի (կանոնակարգ)՝ խմբակցություն կազմելու համար անհրաժեշտ է Բունդեսթագի պատգամավորների առնվազն 5 %-ի ներգրավվածություն⁶: Բունդեսթագի իրավասության տակ են օրենսդրական գործունեությունը, դաշնային բյուջեն հաստատելը, դաշնային կանցլերի ընտրության և դաշնային կառավարության գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելը, միջազգային պայմանագրերը վավերացնելը, պաշտպանության հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելը և այլ հարցեր:

Ինչ վերաբերում է Բունդեսրատի ձևավորմանը, ապա այն ներկայացնում է դաշնային հողերի շահերը, չունի գործունեության սահմանված ժամկետ և մշտապես գործող մարմին է: Բունդեսրատը դաշնային մարմին է, որի միջոցով հողերը մասնակցում են օրենսդիր և գործադիր իշխանության իրականացմանը: Այն ընտրովի մարմին չէ և ձևավորվում է դաշնային հողերի կառավարությունների անդամներից: Յուրաքանչյուր հող Բունդեսրատում ունի 3-6 տեղ: Մինչև 2 միլիոն բնակչությամբ հողերն ունեն 3 ձայն, 2-4 միլիոնը՝ 4 ձայն, 6-7 միլիոնը՝ 5 ձայն և 7 միլիոնից ավելին՝ 6 ձայն: Բունդեսրատի անդամների թիվը 69 է, և դրա կազմը փոխվում է ամեն անգամ, երբ դաշնային հողերից մեկում տեղի է ունենում կառավարության կազմի կամ առանձին նախարարների փոփոխություն⁷:

Բունդեսրատի անդամությունը բացառում է միաժամանակ Բունդեսթագի պատգամավոր լինելու հնարավորությունը: Նրա անդամներն ունեն իմպերատիվ մանդատ, ինչը նշանակում է, որ վերջիններս չեն կարող ընդունել ինքնուրույն որոշումներ և գործում են հողերի կառավարության ցուցումներին համապատասխան: Այսինքն՝ նույն հողի բոլոր ներկայացուցիչները պետք է քվեարկեն միևնույն ձևով: Ուստի քվեարկություններին կարող է մասնակցել հողի ներկայացուցիչներից միայն մեկը, որի ձայնը բազմապատկվում է ներկայացուցիչների ընդհանուր թվով: Որոշումներն ընդունվում են բացարձակ մեծամասնությամբ՝ 35 ձայնով: Բունդեսրատն ունի նախագահ, որին ընտրում են ան-

⁵ St' u Баглай М. В., Лейбо Ю. И., Энтин Л. М. Конституционное право зарубежных стран: учебник для вузов. М., "НОРМА", 2004, էջ 508-510:

⁶ St' u Գերմանիայի Բունդեսթագի կանոնակարգը, 17.12.2020, մաս 4-րդ, https://www.bundestag.de/parlament/aufgaben/rechtsgrundlagen/go_btq

⁷ St' u Դաշնային խորհրդի կանոնակարգը, 08.06.2007, <https://www.bundesrat.de/DE/aufgaben/recht/go/go-node.html>

դամները մեկ տարի ժամկետով: Նա հրավիրում և ղեկավարում է Բունդեսրատի նիստերը, որոշում օրակարգը: Նախագահն ունի վարչական իշխանություն, փոխարինում է դաշնային նախագահին, եթե վերջինս ժամանակավորապես չի կարող իրականացնել իր գործառույթները⁸:

Համաձայն ԳԴՀ Սահմանադրության՝ օրենսդրական նախաձեռնությամբ կարող են հանդես գալ Դաշնային կառավարությունը, Բունդեսթագի պատգամավորները և Բունդեսրատի անդամները (հոդված 76): Օրենսդրական նախագծերը Դաշնային կառավարությունը սկզբում ներկայացնում է Բունդեսրատ, որը վեց շաբաթվա ընթացքում իրավունք ունի կարծիք արտահայտելու նախագծի վերաբերյալ: Կառավարության մշակած նախագիծը հրատապության դեպքում կարող է ներկայացվել Բունդեսթագ նաև 3 շաբաթվա ընթացքում, նույնիսկ եթե սովյալ նախագծի վերաբերյալ Բունդեսրատի կարծիքը չի ներկայացվել, այս պարագայում Բունդեսրատի դիրքորոշումը ստանալուն պես այն անհապաղ պետք է ուղարկվի Բունդեսթագ: Այս նախագծերը ուղարկվում են Բունդեսթագ Դաշնային կառավարության միջոցով, որը 3 ամսվա ընթացքում պարտավոր է արտահայտել իր դիրքորոշումը նախագծի վերաբերյալ: Օրենսդրական նախագիծ կարող են ներկայացնել նաև Բունդեսթագի պատգամավորները կուսակցական խմբակցության անունից, եթե հավաքված է պատգամավորների ընդհանուր թվի 5 %-ի ստորագրությունը: Բունդեսթագի ընդունած նախագիծը ներկայացվում է Բունդեսրատ, և վերջինիս համաձայնության դեպքում օրենքը գործի է դրվում: Եթե անհրաժեշտ են լրացումներ կամ փոփոխություններ, ապա Բունդեսրատը կարող է 3 շաբաթվա ընթացքում պահանջել համապատասխան հանձնաժողով հրավիրել՝ նախագիծը քննարկելու համար:

Եթե Բունդեսրատի համաձայնությունը պարտադիր է, ապա հանձնաժողով կարող են հրավիրել Բունդեսթագը և Դաշնային կառավարությունը: Եթե հանձնաժողովը առաջարկում է փոփոխություն կատարել նախագծում, ապա Բունդեսթագը այն կատարելուց հետո կրկին ընդունում է նախագծի նոր տարբերակը: Եվ եթե վերջինիս համար Բունդեսրատի համաձայնությունը պարտադիր չէ, և այն ընդունվում է առանց այդ մարմնի համաձայնության, ապա Բունդեսրատը կարող է վերոնշյալ գործընթացի ավարտից հետո 2 շաբաթվա ընթացքում բողոք ներկայացնել ձայների մեծամասնությամբ, որը կարող է մերժվել Բունդեսթագի պատգամավորների մեծամասնության կողմից (հոդ. 77): Գերմանական պառլամենտի օրենսդրական նախաձեռնության առանձնահատկությունն այն է, որ Բունդեսրատն առանց Բունդեսթագի համաձայնության կարող է ընդունել օրենքներ որոշակի պայմաններ

⁸ St' u Баглай М. В., Лейбо Ю. И., Энтин Л. М., նշվ. աշխ., էջ 512-513:

րում. երբ Դաշնային կառավարությունը օրենքի ընդունումը համարել է անհետաձգելի (հոդ. 81): Այս գործընթացը հիմք է դարձել Բունդեսրատի խորհրդարանի վերին պալատ դառնալու համար⁹:

Համաձայն 1968 թ. ընդունված Հիմնական օրենքում լրացման՝ պալատների համատեղ աշխատանքներն ակտիվացնելու և դրա արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսված է ստեղծել նոր մարմին, որը կարող է փոխարինել խորհրդարանին: Դա, այսպես կոչված, «համատեղ հանձնաժողովն» է, որը ձևավորվում է արտակարգ իրավիճակներում և բաղկացած է 48 անդամից՝ Բունդեսթագի պատգամավորների 2/3-ից և Բունդեսրատի անդամների 1/3-ից: Բունդեսթագի կողմից պատգամավորները նշանակվում են խմբակցության համամասնական ներկայացվածության սկզբունքով: Յուրաքանչյուր հող պետք է ներկայացված լինի Բունդեսրատի մեկ անդամով, որին նշանակում է Դաշնային հողի կառավարությունը: Արտակարգ իրավիճակներում համատեղ հանձնաժողովը փոխարինում է Բունդեսթագին ու Բունդեսրատին և իրականացնում օրենքով իրեն վերապահված գործառույթները: Համատեղ հանձնաժողովի կողմից փոփոխման ենթական չէ միայն Հիմնական օրենքը¹⁰:

Խորհրդարանական կառավարման համակարգեր ունեցող երկրների, մասնավորապես ԳԴՀ-ի փորձի ուսումնասիրությունը թույլ տվեց վեր հանել այն առանձնահատկություններն ու ընթացակարգերը, որոնցով խորհրդարաններում ձևավորվում է մանդատների բաշխման գործընթացը. օրինակ, ԳԴՀ-ում ընտրությունների արդյունքների ամփոփումը և համապատասխան մանդատների բաշխումը խորհրդարանում տեղի են ունենում խառը ընտրական համակարգով, որն ընդունված է անվանել *Հեյր-Նիմեյերի* մեթոդ (մանդատների բաշխման այս մոդելի հեղինակներն են անգլիացի իրավագետ Թոմաս Հեյրը (1806-1891) և գերմանացի մաթեմատիկոս Հորսթ Նիմեյերը (1931-2007): Հեյրը զարգացրել է այս մեթոդը 19-րդ դարի երկրորդ կեսին: 1970 թվականին Նիմեյերի առաջարկով այն ներդրվել է Գերմանիայի Բունդեսթագի հանձնաժողովների և մարմինների կազմը ձևավորելիս: 1987 թվականից Հեյր-Նիմեյերի մեթոդը կիրառվում է Գերմանիայի Բունդեսթագի, ինչպես նաև առանձին հողերի՝ Բայերնի, Բրանդենբուրգի, Հեսենի, Մեքլենբուրգի, Չարսեն-Անհալտի և Թյուրինգենի Լանդթագների ընտրություններում: Համաձայն այս մեթոդի՝ այսպես կոչված «երկրորդային» ձայները, որոնք տրվել են համապատասխան կուսակցության ցուցակին, բազմապատկվում են բաշխման ենթակա մանդատների ընդհանուր քանակով: Այնուհետև ստացված թիվը բաժանվում է բոլոր կուսակցական ցուցակներին տրված ձայների ընդհանուր քանակի վրա: Ստացվում են ամբողջ թիվ և

⁹ St' u **Маклаков В. В.** Иностранное конституционное право. М., "Юристь", 1996, էջ 37:

¹⁰ St' u **Малько А. В.** Конституционное право зарубежных стран. М., "НОРМА", 2005, էջ 358-360:

մնացորդ: Ամբողջ թիվը ցույց է տալիս համապատասխան կուսակցության ցուցակի ստացած մանդատների թիվը: Իսկ ազատ մնացած մանդատները մեկական բաշխվում են այն կուսակցական ցուցակների միջև, որոնք ունեն ավելի մեծ մնացորդային թիվ¹¹:

Այս մոդելի հիմնական բովանդակությունը առավել պատկերավոր բացատրելու համար ուսումնասիրենք, օրինակ, a, b, c պայմանական կուսակցությունների ցուցակներ, որոնք ստացել են՝ համապատասխանաբար 10 000, 6000 և 1500 ձայն: Բաշխման ենթակա է 8 մանդատ: Կամայական a կուսակցության ցուցակի մանդատների քանակը կարող ենք իմանալ հետևյալ բանաձևով՝

$$a = \frac{10000 \times 8}{17500}$$

Յուրաքանչյուր կուսակցական ցուցակի համար նույն բանաձևը կիրառելու դեպքում կստանանք հետևյալը՝

- a. 4,57,
- b. 2,74,
- c. 0,69:

Համաձայն Հեյր-Նիմեյրի մեթոդի՝ 8 մանդատներից 6-ը կբաշխվեն a և b կուսակցական ցուցակների միջև, իսկ մնացյալ 2 տեղերը մեկական կտրվեն b և c կուսակցական ցուցակներին՝ ըստ մնացորդային թվերի մեծության:

Արդյունքում կստացվի հետևյալ պատկերը՝

- a. 4 մանդատ,
- b. 3 մանդատ,
- c. 1 մանդատ:

Մանդատների բաշխման հաջորդ քայլը ենթադրում է, որ յուրաքանչյուր կուսակցության ստացած մանդատների ընդհանուր քանակից հանվում են միամանդատ շրջաններում կուսակցության թեկնածուների ստացած մանդատները: Մնացորդը ցույց է տալիս մանդատների այն քանակը, որը բաժին է ընկնում տվյալ կուսակցության հողային ցուցակին: Այն դեպքում, երբ տվյալ կուսակցության միամանդատ շրջաններում ընտրված թեկնածուների թիվը ավելին է, քան նրան բաժին հասած մանդատների ընդհանուր քանակը, առաջանում են այսպես կոչված «ավելորդ» մանդատներ: Այս պարագայում Բունդեսթագի մանդատները ավելացվում են այդ մանդատների քանակին համապատասխան¹²:

ԳԴՀ խորհրդարանական կառավարման հարուստ փորձի ուսում-

¹¹ St u Դաշնային ընտրական հանձնաժողովի նախագահի կայքէջ, <https://www.bundeswahlleiter.de/en/service/glossar/h/hareniemeyer.html?fbclid=IwAR0632iSAQuW5sMTI6b vLuTb40vM-MpNZvuv8seH9zchhx93kuCqkNp3IgQ>:

¹² St u **Шапошникова Е. А.** Применение персонифицированной системы в выборных кампаниях (актуальность немецкого опыта для современной российской практики). Вестник Московского государственного областного университета (Электронный журнал), 2015, № 1, էջ 4-6:

նասիրությունը և հատկապես խորհրդարանում մանդատների բաշխման համակարգերի վերլուծությունը հիմք հանդիսացան այս համատեքստում վերլուծելու և համեմատելու Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները:

2015 թվականի սահմանադրական բարեփոխումներով ՀՀ-ում ձևավորվեց խորհրդարանական կառավարման համակարգ, որը մի շարք ընդհանրություններ ունի խորհրդարանական կառավարման այլ մոդելների հետ, հատկապես մանդատների բաշխման առումով: Այսպես, կիսանախագահական կառավարման համակարգից անցումը խորհրդարանական կառավարման մոդելին հանգեցրել է Հանրապետության նախագահի գործառույթների ու լիազորությունների էական սահմանափակումների և Կառավարության և վարչապետի գործառույթների ու լիազորությունների կտրուկ ընդլայնմանը:

ՀՀ պետական կառավարման համակարգում առաջնային մարմինը Ազգային ժողովն է: Այս հանգամանքով են պայմանավորված ԱԺ-ի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները, ինչպես նաև այդ մարմնի կենտրոնական դիրքն ու վճռորոշ դերը պետական կառավարման համակարգում: ՀՀ ԱԺ-ի ակտիվ մասնակցությամբ ձևավորվում են իշխանության գործադիր և դատական թևերը: Միննույն ժամանակ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվեցին ԱԺ ինստիտուտը կազմող նորմերը: Բարեփոխումները նախ և առաջ հանգեցրին ԱԺ ընտրությունները միայն համամասնական ընտրակարգով կազմակերպելուն՝ հրաժարվելով նախկինում կիրառվող մեծամասնական ընտրակարգից:

2016 թ. ՀՀ-ում ընդունվեց ընտրական նոր օրենսգիրք, որը բովանդակում է ընտրությունների անցկացման կառուցակարգերը նորովի՝ ավելի նպաստելով քաղաքացիների ազատ կամարտահայտմանը¹³: Ըստ այդմ, ԱԺ և ՏԻՄ ընտրությունների կազմակերպման համար անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ, ուղղակի ընտրություններ՝ գաղտնի քվեարկությամբ: Համաձայն Սահմանադրության 48-րդ հոդվածի՝ ՀՀ ԱԺ պատգամավոր կարող է ընտրվել 25 տարին լրացած, վերջին 4 տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող, վերջին 4 տարում ՀՀ-ում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք¹⁴:

ՀՀ-ում ԱԺ-ի ընտրությունների արդյունքների ամփոփումը և համապատասխան տեղերի բաշխումը խորհրդարանում կազմակերպվում են մի մոդելով, որը մասնագիտական շրջանակներում հայտնի է *Պոնթի քանաձև*¹⁵ անվամբ. այս տերմինը առաջացել է XXI դարի սկզբին՝ ի պա-

¹³ Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրքը, 25.05.2016, ՀՀՊՏ 2016.05.30/42(1222), http://www.arlis.am/_DocumentView.aspx?docid=105967:

¹⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 06. 12. 2015, ՀՀՊՏ 2015.12.21, հոդված 48, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>:

¹⁵ Տե՛ս **Алескеров Ф. Т., Платонов В. В.** Системы пропорционального представительства и индексы представительности парламента. М., 2003, էջ 6:

տիվ բելգիացի մաթեմատիկոս Վիկտոր Դոնթի: Այս մեթոդը ենթադրում է համամասնական ներկայացուցչության, մանդատների բաշխման մի ընթացակարգ, որը խորհրդարանական կառավարման համակարգեր ունեցող բազում պետությունների համար դարձել է խորհրդարանում մանդատների բաշխման և ձևավորման հիմնական ուղի:

Ըստ Դոնթի մեթոդի՝ խորհրդարանական ընտրություններից հետո համեմատվում են կուսակցությունների ստացած ձայների իրական քանակները, և առաջին հորիզոնականում է հայտնվում այն կուսակցությունը, որը ստացել է ձայների առավելագույն քանակը: Հաջորդ մանդատը տրվում է հաջորդ առավել շատ ձայներ ստացած կուսակցությանը: Այս գործընթացը շարունակվում այնքան, մինչև խորհրդարանում բոլոր տեղերը բաշխվում են:

ՀՀ ընտրական օրենսգրքում նշվում է, որ յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հասանելիք մանդատների թվի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը բազմապատկվում է 101-ով, արդյունքը բաժանվում է շեմը հաղթահարած կուսակցություններին (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի վրա, և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հասանելիք մանդատների թվերն են¹⁶:

Այսպես, եթե դիտարկենք համապատասխան շեմը հաղթահարած երեք՝ պայմանական a, b և c, կուսակցություններ, մանդատների թիվը նշանակենք k-ով, իսկ կուսակցություններին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը՝ պայմանական l-ով, ապա կամայական a կուսակցության հասանելիք մանդատների թիվը կհաշվարկենք հետևյալ բանաձևով՝

$$a(k) = \frac{a(l) \times 101}{a(l) + b(l) + c(l)}$$

Այս մեթոդով են հաշվարկվել և բաշխվել 2018 թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ ԱԺ 7-րդ գումարման արտահերթ ընտրությունների մանդատները: Դոնթի բանաձևին համապատասխան՝ ՀՀ խորհրդարանի 132 մանդատները բաշխվեցին 5 % շեմը հաղթահարած երեք քաղաքական ուժերի միջև: Արդյունքում ՀՀ 7-րդ գումարման ԱԺ-ն ունի հետևյալ տեսքը՝

- 1.«Իմ քայլը» դաշինք (84+4 տեղ),
- 2.«Բարգավաճ Հայաստան» (10+16 տեղ),
- 3.«Լուսավոր Հայաստան» (7+11 տեղ)¹⁷:

Ի տարբերություն ԳԴՀ-ի՝ ՀՀ ԱԺ-ն միապալատ կառուցվածք ունի,

¹⁶ Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրքը, 25.05.2016, ՀՀՊՏ 2016.05.30/42(1222), հոդված 95, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=105967>

¹⁷ Տե՛ս ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայք, <https://www.elections.am/parliamentary/>

որի աշխատանքը կազմակերպում և ղեկավարում է ԱԺ հերթական գումարման նստաշրջանում գաղտնի քվեարկությամբ՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընտրված նախագահը: Նա ընտրվում է ԱԺ լիազորությունների ողջ ժամկետի համար:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում, խորհրդարանական կառավարման պահանջներին համապատասխան, որակապես ամրապնդվեց ԱԺ իրավական կարգավիճակը: Մինչև այդ Սահմանադրության 62-րդ հոդվածով ամրագրված էր ԱԺ-ի միայն օրենսդիր բնույթը: Բարեփոխումներով արձանագրվեց, որ ԱԺ-ն ոչ միայն օրենսդիր, այլ նաև ժողովրդի ներկայացուցչական մարմին է (հոդ. 88, մաս 1): Հենց ԱԺ-ի՝ ժողովրդի միակ ներկայացուցչական մարմինը լինելու հանգամանքից են բխում ԱԺ սահմանադրորեն ամրագրված մի շարք նոր գործառույթներ:

Խորհրդարանական կառավարման ցանկացած մոդելի օբյեկտիվ բնութագրման համար հատկապես առանցքային նշանակություն ունի խորհրդարանի՝ գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողական գործառույթի բազմակողմանի և խորը վերլուծությունը: Քննարկվող գործառույթի բովանդակության բացահայտման համար կարևոր է վերլուծել դրա իրականացման՝ ԱԺ-ին վերապահված լիազորությունների համակարգը: Այստեղ կարևոր տեղ ունի Սահմանադրության 108-րդ հոդվածով ամրագրված՝ ԱԺ իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք ԱԺ ներկայացնելու նպատակով քննիչ հանձնաժողովներ ստեղծելու դրույթը:

Վերահսկողական գործառույթ իրականացնելու համար որոշակի նշանակություն կարող է ունենալ նաև պատգամավորների՝ Սահմանադրության 112-րդ հոդվածով ամրագրված իրավունքը՝ բանավոր և գրավոր հարցերով դիմելու Կառավարության անդամներին: Այդ իրավունքը պատգամավորներին և ԱԺ-ին հնարավորություն է տալիս ստանալու անհրաժեշտ տեղեկություններ, որոնց հիման վրա անհրաժեշտության դեպքում կարող են ստեղծվել քննիչ հանձնաժողովներ և այդ տեղեկությունները փոխանցվել համապատասխան իրավասու մարմիններին: Ավելին, ստացված տեղեկություններով չի բացառվում նույնիսկ, որ պատգամավորների մեկ երրորդի կողմից վարչապետին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ ներկայացվի:

ԱԺ վերահսկողական գործառույթների իրականացման համար ավելի արդյունավետ մեխանիզմ է Սահմանադրության 113-րդ հոդվածով նախատեսված խմբակցությունների իրավունքը՝ գրավոր հարցապնդումներով դիմելու Կառավարության անդամներին: Հարցապնդումների պատասխանները ներկայացվում են ԱԺ նիստում, իսկ խմբակցության առաջարկությամբ դրանք քննարկվում են: Այս դեպքում արդեն հոդվածի 2-րդ մասով ուղղակիորեն նախատեսվում է, որ պատգա-

մավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող է ներկայացվել վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ:

Պետք է նաև հաշվի առնել, որ Կառավարության նկատմամբ վերահսկողական գործառույթներ ունենալով՝ ԱԺ-ն փաստորեն վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության ամբողջ համակարգի նկատմամբ:

Վերլուծելով ՀՀ պետական կառավարման համակարգում խորհրդարանական մոդելի հիմնական դրույթները՝ հանգեցինք հետևյալին. ՀՀ-ում Կառավարությունը ունի առանցքային դերակատարություն, որը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 146-րդ հոդվածի 1-ին մասով. «Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է»: Մինչև նույն ժամանակ, նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվեց Կառավարության և գործադիր իշխանության այլ մարմինների փոխհարաբերությունների սկզբունքը. «Կառավարությունն իրականացնում է պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը»¹⁸:

ՀՀ-ում խորհրդարանական կառավարման համակարգի ներդրմամբ էական փոփոխություններ կատարվեցին Կառավարության գործունեության իրավական կարգը սահմանելու ոլորտում: Եթե մինչև սահմանադրական փոփոխությունները կառավարության կառուցվածքը սահմանվում էր օրենքով, իսկ գործունեության կարգը՝ Հանրապետության նախագահի հրամանագրով, ապա նոր պայմաններում նախատեսվեց, որ «նախարարությունների ցանկը և Կառավարության գործունեության կարգը Կառավարության ներկայացմամբ սահմանվում են օրենքով» (հոդ. 147, մաս 2):

Վարչապետի ընտրության ու նշանակման և Կառավարության կազմավորման գործընթացները Սահմանադրության 149-րդ և 150-րդ հոդվածներով հստակ սահմանազատված են: Կառավարության կազմավորման հարցում վճռորոշ է վարչապետի դերը: Ձևական-իրավական տեսանկյունից Հանրապետության նախագահն է նշանակում փոխվարչապետներին և նախարարներին: Մակայն նախագահը կարող է մերժել համապատասխան պաշտոնների նշանակումները միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը որոշում է կայացնում այն մասին, որ վարչապետի կողմից առաջադրված թեկնածուն չի համապատասխանում Սահմանադրությամբ Կառավարության անդամին ներկայացվող պահանջներին: Հանրապետության նախագահի կողմից Կառավարության անդամի նշանակումը մերժելու ցանկացած այլ դեպքում «համապատասխան փոխվարչապետը կամ նախարարը նշանակված է համարվում իրավունքի ուժով»: Այդպիսով, վարչապետի կողմից առաջադրված Սահմանադրությամբ Կառավարության անդամին ներկայացվող պահանջներին համապատասխանող անձը Կառա-

¹⁸ ՀՀ Սահմանադրություն, 06. 12. 2015, ՀՀՊՏ 2015.12.21, հոդված 146, 1-ին և 3-րդ դրույթներ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>:

վարության անդամ է նշանակվում կա՛մ Հանրապետության նախագահի կողմից, կա՛մ իրավունքի ուժով: Եթե հաշվի առնենք նաև այն, որ Կառավարության կազմում փոփոխություններ են կատարվում վարչապետի առաջարկությամբ, և այս դեպքում ևս Հանրապետության նախագահը գործնականում չի կարող մերժել վարչապետի առաջարկությունը, ապա ակնհայտ է դառնում վարչապետի վճռորոշ դերը պետական ինստիտուտների համակարգում:

Պետք է նկատել, որ ԳԴՀ-ում Կառավարության կազմավորման սահմանադրորեն ամրագրված կարգը գրեթե նույն է, ինչ ՀՀ-ում այսօր կիրառվում է: Այս առումով տեղին է հիշատակել Կոնրադ Հեսսեի նկատառումն այն մասին, որ ԳԴՀ Հիմնական օրենքը, Կառավարության կազմավորման հարցում նվազեցնելով նախագահի դերը և ուժեղացնելով դաշնային կանցլերի (վարչապետի) և Բունդեսբանկի դերերը, փորձել էր խուսափել Վայմարյան Հանրապետության այն սխալներից, որոնց պատճառով արձանագրվեց կառավարության ոչ բավարար կայունություն:

Խորհրդարանական կառավարման կոնկրետ մոդելի առանձնահատկությունների բնորոշման համար կարևոր նշանակություն ունի Կառավարության սահմանադրական լիազորությունների ուսումնասիրությունը, քանի որ հենց դրանցով են բնորոշվում Կառավարության տեղն ու դերը պետական իշխանության մարմինների համակարգում: 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո լիազորությունների ընդլայնման արդյունքում ՀՀ կառավարությունը պետական կառավարման համակարգում ձեռք է բերում այն կարգավիճակը և դերը, որն ընդհանրապես բնորոշ է կառավարությանը խորհրդարանական կառավարման բոլոր մոդելներում, և որի մասին բազմիցս նշվել է իրավաբանական գրականության մեջ: Կառավարությունն իրականացնում է բարձրագույն քաղաքական ղեկավարությունը և պետության գործերի ընդհանուր կառավարումը: Նրա գործունեության մեջ արտահայտվում և գործնականում իրացվում են առավել ընդհանուր և էական հասարակական շահերը: Այն հանդես է գալիս որպես պետության արտաքին և ներքին քաղաքականության իրացումը, սահմանադրական կարգի պահպանումը և պաշտպանությունն ապահովող հիմնական պետական մարմին: Կառավարությունը վճռորոշ դեր է կատարում պետության քաղաքականության հիմնական նպատակների մշակման և ձևակերպման, դրանց հասնելու հիմնական ուղիների և միջոցների որոշման գործում¹⁹:

ՀՀ կառավարության կազմավորման և հրաժարականի հիմքերի ու կարգի, ինչպես նաև Կառավարության սահմանադրական լիազորությունների վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ այս

¹⁹ St u **Енгибарян Р. В.** Конституционное развитие в современном мире: основные тенденции. М., 2010, էջ 385-404:

մողելում (ինչպես ցանկացած այլ խորհրդարանական կառավարման մողելում) գործադիր իշխանություն իրականացնող Կառավարությունը պատասխանատու է խորհրդարանի առջև, որն իր հերթին արձակվում է իրավունքի ուժով, եթե չի կարողանում ընտրել վարչապետ կամ հավանություն տալ Կառավարության ծրագրին: Պետք է նաև նկատել, որ այդ գործընթացներում, ինչպես նաև Կառավարության գործունեության կազմակերպման ոլորտում վարչապետի դերակատարությունը հիմքեր է տալիս արձանագրելու, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով ձևավորված խորհրդարանական կառավարման համակարգը վարչապետակենտրոն է, և մեծ ընդհանրություններ ունի ԳԴՀ պետական կառավարման մողելի հետ:

Բանալի բառեր - խորհրդարան, մանդատների բաշխում, խորհրդարանական կառավարում, սահմանադրական փոփոխություններ, համամասնական ընտրական մոդել, քվեարկություն, արդյունավետ կառավարում, օրենսդիր իշխանություն

ЭДГАР КАЛАНТАРЯН – Конституционные структуры парламентского правления на примере Германии и РА. – Выбор эффективного государственного строя – один из важнейших вопросов, встающих перед государством, избравшим демократический путь развития. Всестороннее исследование вопроса, в частности модели парламентского правления, структуры формирования парламента, смешанных, пропорционально-мажоритарных избирательных систем, заслуживает серьёзного внимания. В этом контексте важен пример ведущих стран, создавших стабильную основу для развития страны, в частности ФРГ. Успешный опыт Германии полезен для Армении, совсем недавно принявшей парламентскую форму правления. Зарубежный опыт должен способствовать развитию парламентаризма в РА.

Ключевые слова: Парламент, распределение мест, парламентское правительство, поправки в Конституцию, пропорциональная избирательная модель, голосование, эффективное управление, законодательная власть

EDGAR KALANTARYAN – Constitutional Structures of Parliamentary Government (on the example of Germany and RA). – The choice of an effective government form is one of the most important issues facing a state that has embarked on the path of democratic development. A comprehensive study of the issues, like the mechanism of parliamentary formation, mixed and proportional-majority electoral systems within the framework of the parliamentary government model deserve special attention. In this case, the example of the leading countries, particularly Germany is essential that have created a stable basis for the development of the country. Germany's successful experience can be useful also for the Republic of Armenia (RA), which has adopted a new parliamentary form of government. The study of foreign experience can contribute to the development and enhancement of the role of parliament in the RA.

Key words: Parliament, distribution of mandates, parliamentary government, constitutional amendments, proportional electoral system, voting, effective governance, legislature